մահուն արդուճարդայ կեցեալ ի կոստակալութենէ տանն
Խեռաս :

2 : Յոմանոյ արքունական կոստակալի մինչև գահակալեալ : 2

Ը · 1 :

3761 : Արտաւազդ որդի յաւագ իշխանացն Հայոց ի մեռանիլ
4960 : հրամատայ քառնացեալ տիրեաց ի վերայ երկրին . և
էր սա այլ խրոխտ և կորովի . որով և տարածեաց զիշ-
խանութիւն իւր մինչև ի սահմանս ատրպատականի , և
այլոց շրջակայ ծագ . և նշխարհեալ զնորութիւնն սեպհ-
կիսացոյց՝ ոչ ևս առաքեր առ նոսա զկարիս : Ոչնեալ
զվտարանդութենէ արտաւազդայ արքայն սեպհկիսացոյց
անտիոքոս եղեգ՝ խաղաց ի վերայ նորա ահագին գաս-
մամբ և պատրաստութեամբ մեծաւ : Եւ արտաւազդ ոչ
իշխեաց ընդդիմ ելանել նմա պատերազմաւ . այլ յղէ
պատգամաւորս ընդ առաջ նորա մեծամեծ ընծայիւք՝
խնդրեաց հաստատել զուխտ խաղաղութենէ , խոստա-
նեալ տալ անխափան զկարիս ծին . և այնպէս յետս
դարձոյց զնա առանց վտգովմանն . և վարեաց զիշխա-
նութենէ իւր երկար ժամանակաւ ամս իբր ծ :

3811 : Արտաշես և դարեհ երկոքին եւս՝ ի միասին առաքեցան
5010 : յանտիոքայ արքայէ սեպհկիսացոյց՝ կոստակալութենէ իշ-
խանութենէ , մին՝ ի վերայ մեծին հայոց , և միւսն՝ ի վէր
փոքրոյն : Արտաշես եդ զաթոռ իւր յՅեղին արարատոյ
առ երասխ գետով . և դարեհ յՅեղին ծովեայ առ եփ-
րատ գետով . որ յայնժամ անկանէր ի մասն փոքրոյն
հայոց . և երկաքանչիւր խնամէին զաշխարհ իւրեանց
ըստ օրինի :

Յաւուրս նոցա պատերազմ մեծ եր ընդ հռոմայեցիս և ընդ
ասիրիկեցիս . և ի յաղթել ասիրիկեցւոց՝ փախեաւ սպա-
րապետ նոցա մեծն անունեալ կարթագինեցի . և եկեալ
ապաւինեցաւ ի մեծն անտիոք արքայ սեպհկիսացւոց :
Եւ ի գրգռիլ մարտի ի մէջ հռոմայեցւոց և սեպհ-
կիսացւոց՝ ի պարտութենէ մատնեցան սեպհկիսացիքն . ի
լինել ապա հաշտութենէ խնդրեցին հռոմայեցիքն ի սե-
պհկիսացւոց տալ ի ձեռս իւրեանց զանունեալ . և զի
անտիոքոս սիրէր յոյժ զանունեալն՝ խնայեաւ ի կեանս
նորա զաղէտ փախուցեալ զնա ի կողմանս Հայոց :

Եւ աննիւթապէ դնացեալ անկաւ առ արտաշաս կուռա-
կապալ մեծ. և եղև նորա մտերիմ և սիրելի. և բազում
ինչ իմաստութիւն խոյհեալ ընդ նմա վն հաստատուն պա-
հելոյ զայն իշխանութիւն հայոց՝ ոչ սակաւ նպաստս մա-
տոյց նմա: Այսոյկ նմա ևս զձև քաղաքի. և արտաշաս
նոր վերակացութիւն շինեաց զայն քաղաք առ երասխ գե-
տով, ուր խառնի գետն մեծամօր. և կոչեաց զնա յիւր
անուն արտաշատ. որ և եղև գլուխ քաղաքացն հայաս-
տանի. և անդ փոխեաց արտաշաս զաթոռ իւր. տես
զ պատմ. զ ծանօթութենէն. ք. 1. (4):

Այեա այսորիկ տեսեալ երկոցունց կուսակալաց Ծիս՝ 3820.
արտաշասայ և դարեհի՝ եթէ զօրացան հռովմայեցիք, 5019.
ուխտ եդին ընդ նմա հաշտութիւն. և ձեռնատուութիւն նոյ
կրկին հաստատեցան յիշխանութենէ իւրեանց՝ նշկահեալ
զսեպհականսն. և ընկալան զանուն թագաւորի: Եւ
այնուհետև կասկածեալ անննիւթապէս յերեսաց արտա-
շատայ վն միաբանելոյ նմա ընդ հռովմայեցիս՝ խոյս ետ ի
նմանէ, և գնաց ի կրետէ: Եւկ արտաշաս զօրացեալ
օրըստօրէ, և հաճոյ գտեալ յաչս ամ հայոց՝ սպառ յոլով
շինութիւն. և բազում անդորրութիւն խնամէր զմեծն
հայք. որպէս և դարեհ զիմոքն:

Օ՜ն ինի ամաց ինչ թագաւորեալ՝ ի վր սեպհականացեալ 3829.
անտիոքոս եպիփան, և լծեալ զմիաբանիլ արտաշա- 5028.
սայ ընդ հռովմայեցիս, և զտիրել նմա թագաւորական
շքով, պատգամ սպառնալեաց առաքեաց առ նա գալ
ի հնազանդութիւն իւր, և անթերի զհարկ Ծին առ
ինքն յղել: Եւ յարհամարհել նորա զպատգամն թա-
գաւորին՝ զայրացեալ յոյժ անտիոքոսի՝ խաղաց զօրու
ծանու՝ ի վերայ արտաշատայ: Եւ արտաշաս զօրօք
հայոց և այլոց աղգաց ընդ մարտ անտիոքայ. բայց տես-
նէր կորագրութիւն փախստեայ անկաւ յոյն իւր՝ ի հայս.
և ապա ակամայ կամօք յանձն էառ նուճատիլ ընդ ձե-
ռամբ անտիոքոսի. և անգէն վերադարձեալ ժողովեաց
գանձ բազում յՅունն հայոց՝ առաքեաց առ նա՝ ի վճա-
րումն հարկաց:

Եւ ապա կամակաւ առեալ թէ պատճառ գրգռութեանն 3835.
անտիոքայ ինչ լեալ դարեհ կուսակալ փոքունն հայոց՝ 5034.

բեաս նորա . և առ ի ցուցանել թէ ինքն անհնազանդ սիրով է նմա , առաքեաց առ նա ի պատանդ զկրսեր որդի իւր՝ զորմն անուն :

3839 : 5038 : Այլ եղև ի մեռանիլ դարեհի՝ պայազատեաց զկիւրա- նութի նորա մորփիւլիկէս երից որդի նորա յաջին ծո- փաց : Ո այն խմայեալ արտաշատոյ՝ պատրաստեցաւ խաղալ ի փոքրն Հայս , և տիրել միմամ մասին նմա : Մոսկացեալ ընդ այս մորփիւլիկէս՝ աձապարեալ անկաւ առ արեթ Թագաւոր կապադովկիոյ , և խնդրեաց օգ- նութիւն ի նմանէ : Իբրև իմացաւ զայս արտաշատ՝ փու- թանակի հրեշտակս արձակեաց առ արեթ , և ասէ . զի կայ քո և որդւոյ դարեհի . ևկ միաբանեա ընդ իս . և բարձցուք ի միջոյ զերկուս որդիս նորա . ես սպանից զդորն որ կայ առ իս , և դու զմորփիւլիկէս որ անկեղ է առքեղ . և տիրեսցուք ժառանգութեան նոյ . և որչափ ինչ սահմանք իցեն փոքրն Հայոց՝ բաժանեսցուք ի մէջ մեր :

Այլ ոչ անցաւ նմա արեթ . նաև բազում բանիւք մե- ղադիր եղև հրեշտակաց նորա . և դրեալ նամակ առ արտաշատ՝ յորդոր եղև նմա յետս կալ յայնպիսի անի- րաւ բռնակալութենէ : Այլ ինքն արեթ ալքայ ձեռնտու լեալ զօրօք Թագաւորեցոյց զմորփիւլիկէս զորդի դա- րեհի կուսակալի ի վերայ փոքրն Հայոց : Այլ երբ սա ինքն մորփիւլիկէս այր քաջ և հակայ , ահեղ տեսլեամբ և զօրաւոր ի մարտի : Ոսկ արտաշատ որ խորհէր զի- նել ընդդէմ մորփիւլիկեայ , հասեալ ի վախճան կենաց մեռաւ , կացեալ յիշխանութեան մեծին Հայոց ամն իբր . Ը :

3841 : 5040 : Արտաւազդ՝ որդի արտաշատայ յաջորդեաց ի տեղի նորա տիրեաց ի մեծն Հայս ամն իբր ԺԲ . և սա եղև վերջինն ի կուսակալս Հայոց՝ ի յառնել արշակունեան Թագաւորութենէ :

ՄԱՄԱՆ ԱՐՐՈՒՐԴ։

ԻՐ ԽՄԱՆՈՒԹԻՒՆ ԸՐՔԱՀՈՒՆԱՑ։

որ թուեցաւ ամս 580։

ՔԱ. 1։

ԳՏԻՆԻ ՄԱՆԱՒԵԱՑՈՑ Ի ՎԱՆ։ (3754։)
(4953։)

Յայ արևելեան ազգաց Համօրէն՝ յարեաւ յոգիւ պարթևաց իշխան ոմն արշակ անուն սերեալ յազգատոհմէ՝ ի քեռուբական ծննդոց։ Սա առ ինքեան ժողովեալ զիշխանութիւնն՝ անտի սկսեալ կիսացոց՝ մինչև ցաշխարհս Հայոց։ Եւ ի վերայ պարթևաց և պարսից, մարաց և ասորեստանեայց։ Եւ եղև անուանի յոյժ. մինչև յանուն ազգին նոր պարթև կոչիլ այնոց ազանց՝ որոց տիրեաց, այլ են պարսիկք և մարք, ըստ որում յետոյ և հայք։

Ընդ նմին ժեռաւ արշակ յետ տիրելոյ յիշխանութեան (3785։) երկրաւմամն լոյս, յաջորդեաց ի տեղի նորա արտաշէս որ- (4984։) դի նորին զամս ինչ։ Եւ ի մեռանիլ նորա ետաւ որդի նորուն արշակ երկիր, որ կոչեցաւ մեծ. զի զօրացաւ յոյժ յոյժ առաւել քան զառաջինն. և ընարձակեաց զիւրան իւր մինչև ի հնդիկս յինդոս գետ։ Վասն եաւ սպա և յայնմ հայաստանեայց՝ էառ և տիրեաց համօրէն սահմանաց նոր, և ի բաց վանեալ անտի զարտաւազդ զվեցերկին կուսակալ զորդի արտաշասայ՝ թագաւորէ զվերջինն յայսմ աշխարհի յոգիւ արտաշասայ ի վերայ ծին հայոց զեղբայր իւր զվաղարշակ՝ ի մի ամի թագաւորութենէ իւրոյ։ 149 ամօք յառաջ քան զքս. տունեալ նմա բռնակալ զմեծն հայաստան, և զիւրոցն ընդ նմա, և այս և իբր յաւելուածք զծն ատրպատական։ պատուէր տունեալ նմա միանգամայն տիրել և այլոց ևս ծագ յարեմտեան հիւսիսոյ։ * որչափ միտք քո ասէ և քաջութիւնն հասանէն։ զի սահմանք քաջաց՝ զինն իւրեանց։ որքան հատանէ՝ այնքան ո-

Գլ. 1 : Յառանաւ վաղարշակայ առաջնոյ :

Ը. 2 = 3 :

3852 : 5051 : Վաղարշակ եղբայր արշակայ մեծի Թոռնէն արշակայ պարթևի Թագաւորեաւ՝ ի վէր Հայոց՝ եղ զաձիոս իւր՝ ի մծբնին ըստ պատուիրելոյ եղբօր իւրոյ : Նա անդէն վաղվաղակի ժողովեաւ զօր բազում յոյժ խաղաց նոքօք՝ ի միջոց Ծին Հայոց յաին երասխ գետոյ մօտ յարմաւիր . և կացեալ անդ զաւուրս ոչ սակաւ կարգ եղ զօրացն , և դիմեաց յարևմուտս հիւսիսոյ մինչև՝ ի ծագս փոքուն Հայոց . ուր Թագաւորեր մորփիւլիկէս որդի դարեհի կուսակալն . որպէս ասացեալ է ի գլուխ Ը. 2 :

Իբրև լուան զալուստն նոր խաղտիք և լազիկիացիք , պոնտացիք և կապադովկացիք , փռիւգիացիք և այլք՝ որք հաստատուն դաշամբ խաղաղութեի ունէին ընդ սեղևկիացիսն , խռովեցան յոյժ . և առ հասարակ ամենքն միաբանեցան՝ ի պատերազմ ընդեմ վաղարշակայ . և կարգեցաւ նոցա առաջնորդ մորփիւլիկէս հզօր : Նա եղև՝ ի բանակիլ նոցա ընդեմ՝ ի մեծանց՝ յետ բազում աւուրց դրդռեցաւ պատերազմ՝ ի կողմանէ վաղարշակայ : Նա մորփիւլիկէս որ ամրացեալ էր պղնձի և երկաթի զրահ հիւք , սկսաւ յառաջ մղել բազմութիւնն ընտիր ընտիր վտեղոյ . և յանդուգն յարձակմամբ հասեալ՝ ի նա կատ վաղարշակայ՝ զբազում արս ընտիրս և քաջս առ ետեղ կոտորեաց , և մօտ անցեալ առ արքայն ձգեաց՝ ի նա գնիզակ իւր իբրև զնետ Թևաւոր : Նակ արք քաջք՝ ի զարմէն հայկայ և յազգէ սենեքերիմայ անցեալ ընդ մէջ՝ խորտակեցին զյարձակումն նիզակին . և զմորփիւլիկէս ընկեցեալ յերիվարէ՝ սպանին անդէն . յայնժամ և զօրք վաղարշակայ հարին զթշնամիսն՝ ի հարուածս սաստիկս յոյժ . մինչև վտակաց արեան ոռոգանել զերկիրն իբրև զհեղեղս անձրևաց . և զմնացեալսն արարին փախստական :

3854 : 5053 : Նա վաղարշակ նուճատեալ զիմ ազգս բնակեալս առ ծովմանօք կապադովկացւոց , պոնտացւոց , լազիկիացւոց, խաղտեաց և եգերացւոց՝ արար զինքեան հարկատուս . Նպա դարձ արարեալ յայնոցիկ կողմանց եկն՝ ի սահմանս տայոց . և առ ստորոտով պարխարեայ լե-

լինն

ելին շինեաց իւր առաքանոց, և չրէհալ անտի եւին ի քաղաք իւր ի մծբին։

3857 Յետ անդորրանալոյ վաղարշակայ՝ կամեցաւ տեղեկա-
5056 նալ թէ ուստի լեալ ծագումն հայոց. և ոչք տիրեալ եղեն յառաջ ք զինքն, և զինչ անցք անցեալ եղեն ի հայաստանի, և յորմէ եղեն նախարարութիւնք նը. և ոչ եգիտ գիրս ի վէր այսոցիկ երից. այլ միայն զերդս ինչ, յորս ստուերաբար և այլաբանօրէն պատմեալ էր ներ ինչ ինչ։ Ոչ այլ խորհեցաւ ի հին քաղդէական մատեանս որոնել զոր խնդրէր. գտեալ ապա զմի ոմն ասորի՝ մարիբաս կատինա անուն, որ Թարգմանի տէր ի-
բաս ուշիմ, այր մտաւարժ, և տեղեակ գրոց և լե-
զուի քաղդեացւոց և յունաց՝ առաքեաց զնա հանդերձ
Թղթով ի նինուէ առ եղբայր իւր արշակ. և աղաչեաց
զնա ցուցանել առնն զհին մատեանս պատմուեց. զի
եթէ գտցի ինչ ի նա վս ազգին հայոց՝ հանցէ անտի։
Ընդ այս ուրախ լեալ արշակայ մեծի՝ հրամայեաց բա-
նալ համարն զդիւանն գրոց նախնեաց Թագաւորաց՝ որ ի
նինուէ. Ուր յուզեալ մարիբասայ զնամ մատեանս՝ և
գիտ գմին յունական գրով. որոյ վերնագիրն էր այսպէս։ * Այս մատեան հրամանաւ աղեքսանդրի ի քաղ-
դեացւոց բարբառոյ փոխեալ ի յոյն. որ ոմնի զբուն
հնոց և գնախնեացն բանս ‖ Յայսմ մատենի կարդաւ
եհան մարիբաս զպատմութիւնս հայոց ի հայկայ մինչև
ցպարոյր, և անդր ևս մինչև ցվահէ. և եբեր առ վա-
ղարշակ ի մծբին։

Ուրախացեալ ընդ այս վաղարշակայ՝ եդ զայն ի դան-
ձարանի իւրում ի պահեստի մեծաւ զգուշութիւն։ Ետ ա-
պա առ ինքն մարիբաս գտեալ և զայլ մատեանս՝ գրեաց
և անտի ինչ ինչ մինչև ի ժամն իւր. գրեաց և զգործս
վաղարշակայ և որդւոյ նորա արշակայ. ևս և գրեաց
զգործս արշակայ պարթևի և զԹուխմնը արշակայ մե-
ծի եղբօր վաղարշակայ. որով յայտնի առեալն Թէ
հին պատմութիւնք հայոց ատուգատոյն համարին քան
զայլոց ազգաց՝ բաց յեբրայեցւոցն։

3858 Ձեռն էարկ ապա վաղարշակ վայելչացուցանել ըզ-
5057 Թիւրութի իւր՝ եթէ ըզ զանազան իշխանութեց և ը-
նդ

դ Հաց զբիւսս սրս՝ յիշեցուցանել զիւ զբով. ասի զհաս
րին՝ ի բերելն նը յանկրաս. կամ յանպիտան հրամանս.
իսկ միսն՝ զվնասիչ խղերն լնել յանսխալ միտ նը ի
պատճէ զգալս ։

Այսդհաց և զհաղարաս պնօրհդրական իւր՝ Թադաս
զիր լնել յորդոյ յորդիս Թէրեայ եղելոյ ի ցեղէն սր
շաւունեաց ։ Այս բաղարաս , ոմն յիշեցաք ի սե ։ 5 ։
եր յայգէ հրեից , այլ քաջ և բարեխիտ . սր և ի բա
զում իրս ձեռնասու էր վաղարշակայ՝ տեղեակ գործ օ
րինաց նոն . և յանուն սր սորին բազատասներք
կոչեցան . և բաղում ի նմանէ վնս հրեական հաւատոց
հաստատակեցան ի Թագաւորացն մերոց ։

3862 ։ Այսդ եղ վաղարշակ և յորդիս իւր, զի ունէր բազում
5061 ։ ուսուերս . և զի ոչ Համարէր պատշաճ կալ նմանն նմ ընդ
իւր ի մեջբն առաքեաց զնս ի գաւառան Հայոնեից .
և ետ նմ գնմ վնս կոզմանցն այնոցիկ . և կարգեաց
խրաբանելոյ նմ առձինս արքունուստ ։ Այլ զանդրան
նին որդի իւր զարշակ պահեաց առ ինքն վ յաղթող
լսոնաս ի Թագաւորուէ ։ Այս յայտնէեալ եղև օրինք
ի մէջ արշակունեաց , զի մին յորդոյ Թէրեի բնակիր
առ Հօրն յաջորդել նմա. իսկ զայլսն առաքէին ի կող
մանս Հայոնեից սերել յազգ արշակունեաց ։

3873 ։ Այս ինքն վաղարշակ յետ Թագաւորելոյ ամս ին . ա
5072 ։ ռաւ ի մեջբն ։ Այս սրք միաբան ի վաղարշակայ առա
քեալ Թագաւորեցին որգոյ յորդիս ի վէր Հայոց՝ արշա
կունեք կոչեցան յանուն պապանդն արշակայ պարթեւի .
ոչ և պարսից . մինչև առ Հաւաքան արտաքին մնաց
նադրաց վերկոսին և երբեմն պարթեւս կոչել ։

ԺԲ ։ Վաղարշակ առաջին առ արտաշէս ։

Գ ։ 4 ։

2873 ։ Բազում առաջին որդի վաղարշակայ Թագաւորեալ
5072 ։ վաղանակ Հօր իւրոյ՝ Հետևող գաւառ առաքինու
Թեց նը . և յաւել բազում կարգս գործոց ուղղուԹե .
Այս եղև ի ձեռն սնգ յայտնաբերել ենանեան պատաց
ւոց՝ յարձակեցաւ ի վէր նմ , և նուաճեալ զնս . և
նշան յաղԹուԹե իւրոյ հանդիսեաց ի գեղ սեաւ ծովուն
արձան քարեղէն։ Ուներ սա զնիզակ բոլորատիպ մեծէ
արհեստիւ ինն չափեն դաժան վերնոց . և անգամ մի

յերկն

ընթանալն հետոտոս յերզը ծովու անդ՝ գիմեալ՝ ի
վեր արձանին՝ ձգեաց յոյն զնիզակ իւր, և մեեաց խո-
րագոյնս էբրև՝ ի կաւ՝ ի պատուճանդան արձանին՝ որ
ունէր զձև երկանաքարի։ Ո՛այս արձան բազմ՝ ժամու
պատուեցին պանտապիք էբրև զդործ ինչ յոյժ գոր-
ծեալ։ բայց յետոյ ընկեցին՝ ի ծով՝ յորժամ եղև վերա-
ւին պատերազմ՝ ի մէջ նոցա և արտաշէսի որդւոյ ար-
շակայ։

Զոր այս արշակ պաշտօնատեր գտաւ կուռս յոյժ. և տե- 3877։
սեալ Թէ բազբատուհիք ոչ պաշտեն զկուռսն՝ նահա- 5076։
տակեաց զերկուս՝ ի նոցանէ. իսկ վա այլոցն հրամայէ
եաց ոչ տալ կանայս՝ եթէ ոչ խոստասցին երդմամբ՝
չերկիւղանել զմանկունս իւրեանց և չպահել զշաբաթս.
և նոքա անձնարացեալ խոստացան չերկիւղանել. և յե՛տ
նելն Թէրի յորս կիմ՝ ի պատերազմ չպահել զշաբաթ.
սակայն չառին յանձն պաշտել զկուռսս։ Ա՛յս անցք
եհաս ընդ նոսա և յաւուրս տիգրանայ Թոռնին արշակայ։
Ա՛ ամին Ժամի՝ ի ծագել շիտեմբեր՝ ի կոզմանս լերինն 3880։
կովկասու՝ իշխան ոմն վանդ անուն՝ հանդերձ բազ- 5079։
մութիք հատուածք անկաւ յՅն հայոց՝ ի վերինն բա-
ւէն. և տեղին այն՝ ուր բնակեցաւ՝ յանուն նո՛ր վանանդ
կոչեցաւ։ Ո՛րակ արշակ յետ Թագաւորելոյ ամս Ժ՛

մեռաւ։

Ա՛րտաշէս առաջին որդի արշակայ առաջնոյ Թ՛էրեաց 3886։
՝ի մծբնին՝ ի տեղի հօր իւրոյ։ Ա՛ա՛ ի տիս մանկութեանն 5085։
սիրելի լեալ էր յաչս վաղարշակայ հաւուն իւրոյ. զի
էր մանուկ կայտառ և հզօր. մինչև կարծիս տալ ամենայն
մեծամեծ գործոց քաջութեանն՝ զորս հանդերձել էր գոր-
ծել. որպէս և գործեացն իսկ. քանզի՝ ի Թագաւորել
անդ իւրում վինեալ՝ ի զօրութեան արուեստ՝ հզօր գտաւ քան
զայլս։ Ա՛յլ զի յայնժամ Թագաւորն պարսից համա-
րեաւ առաջին, իսկ հայոցն՝ երկրորդ, արտաշէս արար
զինքն նախագահ նոցին. ևս և ընդ իւրև հատ զնա
պարտս. և շինեաց իւր արքունիս յՅնին պարսից. և յՅն
անդ հատանել դրամս յիւր անուն և յիւր պատկեր։
Ա՛յլ զորդին իւր զտիգրան պահեաւ առ իւր՝ հատ մարզել
զնա՝ ի գործս առաքինութեանն և յիւրս պատերազմական
քաջութիւն։ Ո՛րակ զգուստ իւր զարտաշատա հատ՝ ի հնուն
միհրդատայ մեծի թագաւորէն վերայ առն հզօրի. որ էր
՝ի ջաւակէ առաջնոյն միհրդատայ նախարարին դարե-

հի . և յանձնեաց նմա զկողմնակալութիւն հիւսիսային
լերանց և սմնտոս ծովու ։

3902 ։ Այլ արտաշէս տեսեալ զանձին յաջողուի մեծամեծ
5101 ։ ցաւ . և կամեցեալ տիրել տիեզերաց՝ յարոյց զօր յա-
րևելից և՛ ի հիւսիսոյ բազումս յոյժ , մինչև չդիտել նմա
զհամար նոցա . զի զբազմութենէ նոցին առանձին իմն չա-
փով հնար էր դիտել քան թուել զոր . որոց յարձակել
զնեաս՝ ի միջօրէի՝ լայս արեգականն ծածկէր . և տիւն
առ սեղեան նահմանայր ։ Այս առ յայտնի ցուցանել
լայ թէ յիւրաւի այնչափ բազում էին զօրք իւր , յանցա-
նել՝ ի տեղիս քարուտս՝ հրամայէր նոցա ըզ մարդաթուէ
քար առնուլ և ընկենուլ յիջևանս . որով կարկառ լեռ-
նանման կանգնիւր՝ ի նոսին ։

3903 ։ Այլին բազմութիւն խաղայց արտաշէս յարևմուտս . և
5102 ։ նուճաձեալ զցամաք երկիր փոքուն ասիոյ՝ հղ՝ ի ծով
բազմութիւն հասուց . և հասեալ՝ ի հելլեսպոնտոս՝ տի-
րեաց Թրակիոյ և Եւրոպոյ . և քանդեաց վերուելի քա-
ղաքն , յորս յառաջ ըզ վհասանել նոր հասել էր համ-
բաւ նորին ։ Յաղթեաց և լակեդեմոնացւոց որ՝ ի մե-
ջա , և այլոց ազգաց . և զարհուրեցոյց զբնակեալս՝ ի
ասիական միջերկրական ծովուն . և յետին յաղթական
լեալ դարձաւ՝ ի հայս ։ Այս անդ Թիւր կացուցեալ հայոց
3908 ։ զոմդի իւր զտիգրան՝ չոքաւ՝ ի պարոս ։ Այս յայսմ ամի
5107 ։ ոչ ոք գտաւ դիմակաց արշաւանաց նր . զի Թէպէտև
զօրացեալ էին յայնժամ հռովմայեցիք , բայց նք պա-
տահեալ զազգաւ իւրեանց՝ չէին ձեռնհաս ելանել
ընդ արտաշէսի ։

3910 ։ Այլ՝ ի յարձակիլ նորա վերստին յայնոսիկ կողմանս՝
5109 ։ յանկարծակի իմն աղմուկ շիտեից ծագեալ՝ ի զօրս
նորա՝ նոքին իսկ սկսան կոտորել զմիմեանս . յորոց կա-
մ ըստ արտաշէսի ձողոպրել զանձն , փախստական եղև
քեզմ արամբք . և չեւս հասեալ՝ ի հայս՝ սպանաւ՝ ի
զօրաց իւրոց . Թիւրեալ ամն իբ . և՛ ի մեռանիլն ասաց ,

* աւաղ փառացս անցաւորի ։

Ա՛ա դտեալ յասիա զպղնձաձոյլ ոսկեզօծ քաջարուեստ
արձանս արտեմիդեայ և հերակլեայ և ապողոնի , զորս
գործեալ էր սկիւղեայ և դիտոնեայ՝ կրետացւոցն ան-
ուանի արհեստաւորաց՝ յղեաց յՀռն հայոց յարմաւիր ։
Վասրձեալ՝ ի գնալ նր յելլադա՝ անդ ևս գտեալ զբազմ-
արուեստ պատկերս դիւոսի , ևս և արտեմիդեայ , ա-

Թե-

Գաղատացւոց մինչև՛ ի սահմանս սկիւթացւոց մեծաց. և դի-
տէր
ամենայնի և միհրդատ քեռայր տիգրանայ եղև անուշանի՝
ոչինչ պակաս քան զտիգրան՝ տիրելով քսանևերկու
ազգաց մինչև՛ ի ծովն կասպից։ Եւ ամենայն ինչ զոր
ինչ ասիոյ. և յանձն արար զինն միհրդատայ, անուշանել
զնա արքայ պոնտոսի և միջերկրեայց, տուճել՛ ի ձեռս
նորա և զօր քաղցեմ։

3911։ 5110։ Տիգրան երկրորդ՝ որդի արտաշէսի առաջնոյ՝ յետ
մահու հօր իւրոյ թագաւորեաց ի վիճ հայ-
ոց, ժողովեաց վաղվաղակի զզօրսն՝ որք ցրուեալ էին
՛ի մահուան հօրն, և կարգեաց զթագաւորուել
իւր. և կացոյց զմիհրդատ զքեռայրն իւր՝ երկրորդ լի-
նել արքայի։ Եւ զի՛ ի նմին ամի յոյժ լսեալ զմահ
արտաշէսի և զգրոհիլ զօրաց նր՝ հետամուտ լեալ էին
գալ՝ յես մեր, եւ տիգրան ընդ՝ մնոյա, առեալ ընդ իւր
և զմիհրդատ. և փախուստական արար զինս։ Եւ անտի
դարձեալ՛ ի մաժակ՝ այն է կեսարիա, տիրեաց փոքուն
ասիոյ. և յանձն արար զինն միհրդատայ, անուշանել
զնա արքայ պոնտոսի և միջերկրեայց, տուճել՛ ի ձեռս
նորա և զօր քաղցեմ։

3912։ 5111։ Եւ ինքն դարձ արարեալ անտի տիրեաց և այլ բազմ
ծաց. և գերեաց զբազմս, և սարսեցոյց զտիեզերս. և
հնազանդեցոյց ընդ իւրև զազգս յոլովս. որով և այնչափ
բարձրացաւ սիրտ նր, մինչև համարիլ թէ ամենայնիւ
նմանիցի նր յաջողին ընդ տիեզերս։ Եւ որպես գրեն
պատմիչք հռոմայեցւոց, բազմութիւնք թագաւորաց
գերեալք՛ ի նմանէ՝ ձեռնտմած կային առաջի նր և
ծառայէին նմա. այլ զբերեսին՛ ի բազմութենէ անտի
թիգրաց ունէր հանապազ ընդ իւր՛ ի սպաս մատուցա-
նել՛ ի տայս հանդերձ քրմօք իւրեանց. յորոց զար-
աեւիդեայ պատկերն, որ և անահիտ կոչի, եդեալ
տիգրան յերիզա. և զաթենայն յաւանն թիւ։

3 Յառաջակ տէրունական երկրորդէ. և գործ հիմնադրու-
թեամ հռոմայեցւոց։

ՃԻ. 4 = 6։

տէր խօսել ընդ այնոսիկ ազգս՝ իւրեանց լեզուաւ առանց
թարգմանի. որպես վկայեն արտաքին պատմիչք։ Այս
3914։ նուճաձեալ զկապադովկացիս՝ թիւրեցոյց ի վերն նշ զըն-
5113։ դի իւր, անուն էդեսաց նիւ արիտաթէ. և զնոտակաւին
ուղեամեայ էր՝ խնամակալ կարգեաց նմա զդորդիոս
անուն ումն։

Այլ ի բողոքել կապադովկացւոց առ հռովմայեցիս,
առաքեցին նոքա ի կապադովկիա զկուռնելիոս սիղլա՝
զկողմնապահ կիլիկիոյ՝ զայր հզօր և երևելի. որոյ
պատերազմեալ ընդ դորդիոսի՝ վանեաց զնա և զպարթե-
բաթի զօրդն միհրդատայ. և թագաւորեցոյց զարիո-
բարզան յազգէ թագաւորացն կապադովկացւոց։
3915։ Պատնացեալ ընդ այս միհրդատայ՝ ազդ արար տիգրա-
5114։ նայ. և նա առաքեաց զերկուս ի զօրագլխայ իւրոց
զմիհրան և զբակուր՝ ի վերն արիոբարզանայ, ևս և՝ ի վերն
նիկոմիդեայ արքային բիւթանացւոց՝ որ խորհրդակից
էր նոքա։ Այլ իբրև լուան նոքա զարշաւել հայոց՝ ի վերն իւ-
րեանց՝ զահի հարեալ փախեան՝ ի հռովմ. և եկեալ
հայոց թագաւորեցուցին վերստին զարիոբարզան զօրդն
միհրդատայ՝ ի վերն կապադովկիոյ։

Իբրև այս այսպէս յաջողեցաւ՝ գումարեաց միհրդատ
զօր բազմ՝ ի բազմ ազգաց. և սիրեաց ընդ ամսոյն փո-
քուն ասիոյ, և խաղացոյց ևս՝ ի ծովու երեքհարիւր
նաւս, ի վանել և զայլ ևս թշնամիս, և զհռովմայե-
ցիս։ Ո այն տեսեալ զօրավարացն հռովմայեցւոց՝ ե-
կին հանդէպ՝ ի վերն միհրդատայ բազմութիւն զօրաց իբր
երկուհարիւր հազարաց։ Ոյոց՝ ի դիմի հարեալ սա-
կաւք՝ ի զօրացն միհրդատայ՝ կոտորեցին զբազումս, և
զյաղթս ձերբակալ արարին. և զնաւացեալսն՝ ի փա-
խուստ դարձուցին. և ժողովեցին՝ ի նոցանէ զաւար բազմ
յոյժ։ Նոյնպէս և զօրք տիգրանայ պատահեալ միու-
մ՝ ի զօրավարացն հռովմայեցւոց՝ որում անուն էր ակ-
ուիլիոս մանիոս, որ և ունէր ընդ ձեռամբ իւրով չօրս
հազար հեծելազօրս և քառասուն հազար հետևակս,
հարին՝ ի նոցանէ տասն հազար այր. և կալան երեքհա-
րիւր զօրաւորս կենդանւոյն, և զնացեալսն ցիւրեացն
արարին. և ինքն ակուիլիոս գիշերայն փախուցեալ ընդ
սանդար գետ՝ ղերծաւ՝ ի պերգամոն։ Այլեաւ յետոյ
միհրդատայ զսա ինքն զակուիլիոս՝ ետ լնուլ ի բերան
նորա ոսկի հալեալ առ ի յուսանելոյ զինքն առատա-

ձեռն

3917։ 5116։ ձեռն քան զՀռոմէացեսկս։ Եւ յետ զերկեամն պա-
տերազմելոյ միմեանցս ընդ կուռնելեայ սիղեայի՝ հաշ-
տութիւն խօսեցաւ ընդ նմա՝ ի գարնանն քաղեաք տրոյեայ՝
այսու դաշամբ՝ զի գարձուսցէ զկապատուիկնա յարիւ-
ւարեան ընդ իշխանութեանցն Հռոմայեցւոց։

3921։ 5120։ Եւ երկու յանկանել մեծամեծ խռովութեանց՝ ի Թագաւո-
րութեան սելեւկիացւոց՝ խորհեցան իշխանքն նոցա տալ՝ ի
ձեռս տիգրանայ զԹէգրութի իւրեանց։ Եւ յայդ առ-
նել նմա երկն տիգրան զօրու ծանուս. և վանել զանտիո-
քոս՝ Թէգրեաց՝ ի վեր սելեւկիացւոց և համօրէն երկրին
ասորւոց՝ բաց ի սակաւ տեղեաց։ Եւ եդեալ վոխա-
նակ իւր յանտիոք տեղապահ Թէգրուհին սելեւկիացւոց
զմազդատ անուն ումն՝ էջ ի պաղեստին. և գերեալ
զբնակիչսն՝ գարձաւ ի մծբին. և զգերիսն ետ բնա-

3926։ 5125։ կեցուցանել յաւանն վարդգեսի առ քաստաղ գետով։
Իսկ մեռաւ կուռնելիոս սիղեա սպարապետ Հռով-
մայեցւոց՝ եղծաւ հաշտութիւն նոյ ընդ միհրդատայ. վասն
զի արար միհրդատ առ տիգրան յարձակիլ՝ ի կապա-
դովկիա. և նա վազվազեալ եկն և էառ զինն բոլոր. և
եհան անտի գերեսուն հազար ոգիս. և յղեաց գինն՝ ի
հայաստան, տուընել նմա շինս և վայրս բնակութեան. և
ինքն գարձեալ՝ ի տեղի իւր՝ առաքեաց գսինդ մի մեծ
՝ի բանեսեան զօրաց առ միհրդատ. առ օրում կայսն
և այլ գօրք ի հայոց։

3929։ 5128։ Վասն տուընել սպա միհրդատայ՝ ի վեր Հռոմայեցւոց
հարիւր քառասուն հազար հեծելազօրք սպառազինե-
լովք ընդ օրինակ մարզուն Հռոմայեցւոց, և վերստաւան
հազար հեծելազօրօք, և հարիւր գերանդազինն կա-
ռօք, և յաղթական դառեալ՝ էառ գրեթէ համօրէն ըղ-
վերնակողմանս ասիոյ. և սիրեաց էս զբազմութեն նա-
ւուց՝ ի ծովու։

Առաքեցին Հռոմայեցիք ընդ իմ նորա անհամար զօրօք
զղեսկուղես զընկանուր սպարապետ և զկոտտաս երկե-
լի զօրագլուխ։ Եւ ընդ իմ նոցա միհրդատ, և էհար
զզօրսն նոյ չարաչար յոյժ. և վանեաց զինսա մինչև՝ ի
դուռն քաղկեդոնի՝ յոր ապաւինեալ էր կոտտաս. ուր
և՝ ի խուժել Հռոմայեցւոց՝ բնչմ և անհնարին կոտո-
րած եւնց։ Այսպա խաղացեալ՝ ի նաւահանգիստ ծո-
վեզն յափշտակեաց զվաճառսն ցուկանաւս Հռոմայեց-
ւոց, և կոտորեաց զզօրս՝ ի նմա. և այրեաց զքաղաքս
մաղ-

բազմական նաւս . և այնչափ եղև կոտորած այնր ա-
ւուր , մինչև ասել , Թէ ՚ի միում աւուր ծով և ցամաք
լցան դիակամբք հռոմէացւոց : Օ այս գործ մեծ՝
զոր գործեաց միհրդատ՝ ծանոյց վաղվաղակի տիգրա-
նայ , և նա և արքային պարսից :

Վասնեալ ապա ՚ի վէր կիւզիկոն քաղաքի հռոմէացւոց՝ որ մօտ է ՚ի ծովն մարմառայ՝ պաշարեաց զայն . և պատերազմեցաւ սաստիկ ընդ նմ . և յերկարիլ մարտին կարձեաց բաղդ նորա . քանզի պակասեցան պաշարք զօրաց նորուն , և յանկանիլ խիստ սովու՝ սիրեցան զօրքն ՚ի խնդիր կերակրոյ : Վասն այսմ ժամ ղուկոս ղես , և անկաւ ՚ի վէր զօրաց նոր . և յանկնարին դառնութէ սրտին սարր կոտորած մեծ ՚ի բանակի նորին և ՚ի ցրուեալ զօրսն : Յանապատ տեղւոյն զտանիլ միհրդատայ՝ անձարացեալ՝ մարտ եդ ընդ հռոմայեցիսն , և ձեղքեալ զբազմութիւն նոցա գնաց ՚ի պոնտոս : Եւ ղուկոս զնա յհետ իբր յաղթանակօղ
3932 : 5131 : շրջեալ ընդ փոքրն ասիա՝ տիրեաց բազմ տեղեաց առանց պա-տերազմի : Վասն՚ի տրանջիլ զօրացն՝ Թէ ընդէր ոչ պատերազմիս՝ զի էլցէ և մեզ բաժին յաւարէ , եւս պինդ՝ Թէ ՚ի պատերազմիլ մեր՝ դիմէ միհրդատ յօգնութիւն տիգրանայ , և զարթուցանէ զնա ընդդէմ մեր . և ո՛ կարիցէ դիմել ունել զօրուն նոր . (տես ՚ի պատմ. ք. 6 :) Յետ միւսանգամ պատերազմելոյ միհրդատայ՝ անկաւ խռովութիւն ՚ի զօրս նր . և քանզի ՚ի զօրավարաց նորին յարեցան ՚ի հռոմայեցիսն . և ՚ի թողուլ զնա սիրելեաց նորա՝ ՚ի յուսոյ հաւտալ գնաց ՚ի հայս , և ապաւինեցաւ ՚ի տիգրան : Յաւէտ է վախճան նր տիգրան . և ոչ էտ նմա երևիլ առաջի աչաց իւրոց զամ մի և այլ ոք :

4 : Գործ՝ զոր գործեաց պէրան ընդ հռոմայեցիս , և նախ ընդ պողոմայեդացիս :

ք . 6 = 11 :

3934 : 5133 : Յորժամ՚ի հայս էր միհրդատ, սերլենէ Թագուհին՝ կղեոպատրէ կոչեցեալ՝ որ յետ մեռանելոյ ստէպ իւրոյ անտիոքոսի պիոսի՝ սելևկիացւոց արքայի՝ Թագաւորէր ՚ի պտղոմայիդ ՚ի վէր միոյ մասին աստրւոց՝ ո-րոմ չէր տիրեալ տիգրան , գրգռեաց զնա առնել զսե-

զբեղևկիսացիս՝՝ի բաց կալ՝ի հնազանդութենէն տիգրա-
նայ։ ՝՝Սակն ելոյ եւ տիգրան զօրու ծանուռ յաստղիս՝
նուճաձել զտպաստանեաց. և պաշարեալ զպատղամայիւք՝ և
առ գայն. և զի սեղենէ Թագուհին ապաստան անկաւ
յամրոցն սեւկևկոյ, դիմեալ անդր տիգրանայ՝ ձերբա-
կալ ատար զնա և սպան։

Օահէ հարեալ հրէից՝ որք էին՝ի պաղեստին՝ Թէ
գուցէ իջցէ և՝ի վէր իւրեանց, Թագուհի նոցա աղեքսան-
դրէ սաղինա և իշխանք նորին առաքեցին դեսպանս առ
տիգրան բազում երեւելի ընծայիւք՝ երթ պաշարել եր
նա զպտղոմայիդ։ ՝՝Ել նոցա եկեալ և մատուցեալ առա-
ջի արքայի՝ աղաչէին զնա խաղաղասէր և բարեբար լի
նել առ Թագուհին և առ բոլոր ազգն հրէից։ ՝՝Ո՛ր որս
զինչ եաւթ բարի՝ դուքեաց զնոսունչ նոցա։ և
խոստացաւ չառնել չար ինչ ընդ նմա, այլ յաւէտ բարի։
մանաւանդ զի աղաչէին զնա անդր բազաւորունիւն
խնայել՝՝ի նմա։ և ինքն դարձաւ՝՝ի միջագետս։

՝՝Ի գալ տիգրանայ յանտիոք՝ դեսպան առաքեաց առ 3934։
նա զուկուզէս զասպետս իշխանն՝ տալ՝՝ի ձեռս իւր 5133։
զմիհրդատ։ ասա Թէ ոչ առ պատրաստիմք՝՝ի մարտ։
և նա ետ պինդ, Թէ խնամուԹիւն օրինաց ոչ ներեն։ և
քէմ օժտուԹիւն մեծարեալ զասպետս՝ դարձոյց յետս։
՝՝Ի զմիհրդատ արձակեաց՝՝ի պոնտոս առանձնաձալ հե-
ծելովք։

՝՝Ուել ասա զուկուզէսի զեղօս իւր՝ եկն և պաշարեաց
զտիգրանակերտ։ ՝՝ուել զայն տիգրանայ՝ առաքեաց
վեցհազար զօս։ ՝՝Ի նոյ հասեալ անդր, և ձեղքեալ
զբանակ հռոմէականացն՝ մտին՝՝ի քաղաքն։ և առեալ
զբեզմ գանձս և զկարձեն տիգրանայ՝ գիշերայն էլեալ և
բերեալ առ տիգրան։ ըստ որ ապուշ մնացին հռոմայեցիքն։
՝՝Ապա ինքն տիգրան խաղաց՝՝ի վէր զուկուզէսի երեք- 3935։
հարիւր վաԹսուն հազար արամբք երկաԹապատ զի- 5134։
նեւորս հազար։ և եկեալ բանակեցաւ յընդարձակ դաշ
առ ընդ քսանևչորս գումարս, և պարսատուրս և աղեղ
և դողաց։ և ընԹողեալ զօրս՝՝ի վէր տիգրանակերտի՝ և-
նելովք։ ՝՝Ո՛ր իբրև լուաւ զուկուզէս՝ զահի հարաւ
մաւ։

մարհեալ զգոյն պատրաստութեէն հառնէ ական արուէ
ամենեւին անհոգ եղիւ, եդեալ ի մտի ի մի ումէ կալ
նել զնո ի ձեռն ախտաւոց. և ինքն սկսաւ ի զբօսանս
բերել ընդ նմին և զօրք նր բնաւին անպղծ վեալ խրա
խանիս կատարելին։

Յոր զօրք հռովմայեցւոց տեսեալ զայնքան բազմու
թիւ սպառազինացն տիգրանայ՝ աչիւ մեծաւ ուսգ
նապէն. և յորդորելին զղուխուղէս ապրեցուցանել
զանձն։ Ա՛յլ նմանապէս զուխուղէս իրագէտ լեր՝ թէ
չինչ միաս եցի տիգրան և զօրք նր, թեպետ և ինքն
զարհուրեալ էր, իրթևտեսեալ զզօրսն, և ետ պատ
ուէր մի բնաւ չայել յատար հայոց, այլ միայն ի վա
նել զնոս։

Ա՛յսպէսերեալ ասպ առինեցուն նմ՝ միաբան յարձա
կեցան ի վէր տիգրանայ։ Յոր տիգրան՝ որ դեռևս չէ
ցեալ կալը յամենգումն տեսանել տեսանէր, տեսանէ
զանգուած յարձակումն հռովմայեցւոց՝ յանկարծակի
նին շփոթեցաւ ի կատաղութենէ խորհրդոց իւրոց։
և փոխանակ մնելոյ զզօրս իւր ի վէր հռովմայեցւոց՝
փող եհար յետս դառնալոյ. ընդ որ զարմացեալ զօ
բաց նր շփոթեցան։ Յայն շփոթ նր հասեալ հռով
մայեցւոց՝ սկսան հարկանել զնս չարաչար և փախու
ցանել, և անկան ի զօրացն տիգրանայ հինգ հազար.
և ոմանք կալեալ եղեն։ Ա՛ւ նա ինքն տիգրան դիմե՛լ
անկաս յամենց մի, և զօրք նր ընդ նմ՝ յորոց և բաղումք
ցրուեցան։

Ա՛յետ այսր անակնկալելի յայդհուէն՝ ամասպարեալ
զուխուղէսն՝ դարձաւ ի վէր տիգրանակերտի և հաս
զայն. և եդիտ ի նմա զանձ բազում. Ո՛ այս իբրև
լուաւ տիգրան՝ առաքեաց զվեճեճլազօրս իւր ի վէր
զուխուղէսի, որոց ի ձանապարհի պատահեալ հեծե
լոյն հռովմայեցւոց՝ զորս յղեալ էր զուխուղէս՝ խոր
տակեցին զնս։ Յորում եհաս այսր յահանգս զուխ
ուղէսի՝ սոսկացաւ և շուարեցաւ. և առնէ նոյն ժա
մայն զվաղահասս իւր՝ փութացաւ հասանել յօգնու
թիւն նմ։ Յոր հեծեճլազօրք հայոց փախուստ եկեճե
լով յետս նահանջեցան. և ի սպդիւ զուխուղէսի զզօ
րին նի նը ընդ կրանին զարձեալ՝ փառաբեղին զզօրս
նր առ հասարակ ի գժդեակ խոցոճաձոյ նետից իւր
եանց։ Ո՛ ի նմ գրեն պատմիչք հռովմայեցւոց՝ զգօ
րա-

թագոյն եկն հեծեալազօրք հայոց. և սլաքք նետից նոցա
ազատեալ էին յայլ սլաք անբևեռ. որոց ըստ հարկա-
նին ըստ մտին՝ մնայր ի ներքս անբևեռ սլաքն. և ոչ
գոյր հնար բժշկութեան. զի չէր կարելի անվտանգ հա-
նել զայն. և զի անվնաս դիպեցուցանէին հայք ըզ-
նետսն, բազումք անկանէին անդ ի հուվմայեցւոց.
և բազումք ևս կարեվէր խոցեալ անպիտանանային։
Ձկարծեալ ապա զուկուզէայ զդէմ ունել այսպիսի
հարուածոց՝ դարձաւ ի փախուստ։
Ի զբաղիլ միգրանայ ընդէմ հուվմայեցւոց՝ ապստամ
բեալ մազդատ մեծ նախարար՝ որ յանուն միգրանայ
իշխէր սեբևկիացւոց՝ Թագաւորեցոյց ի վէր ՚ի զատա-
նեցեալն անահոբոս, զկնի կալոյ այնր իշխանութեանն ի
ձեռս միգրանայ ամն ժէ։
Յետ այսորիկ կամեցեալ միգրանայ վրէժ առնուլ ի 3936։
հուվմայեցւոց՝ կացոյց իւր սպարապետ զմիհրդատ. 5135։
և նա զօրու ծանու պատերազմեալ ընդ բազում ան-
գամ յաղթեաց նոցա. տես ի պատ. հայ. ք. 8։ Ապաց
ապա և միգրան ի սահմանս կապադովկիոյ. զոր իբ-
րև լուաւ զուկուզէս՝ յայն մեծ պատերազմի, և զօրք
նոր ըստ նմա. և ի համարձակիլն դիմել ի վերայ միգ-
րանայ՝ ցրուեցան ի նմանէ զօրք իւր. և որք մնացինն
խորհին փախչել։ Այլ միգրան տիրեալ կապադով-
կիոյ յանձն արար զայն միհրդատայ. և ինքն դարձաւ
ի քաղաք իւր. և այնուհետեւ սիգաձեմ բարձրացաւ
միհրդատ ի վէր հուվմայեցւոց. և էառ զնոսա ահեղս՝
զորս յաւիտենական հայել էին հուվմայեցիք։
Ապաքեցաւ ապա ի հուվմայեցւոց փոխանակ զուկու- 3938։
զէայ պոմպէոս մեծ. ըստ որում էառ պատերազմ միհրդ- 5137։
դատ բազում անգամ. և ապա ժողովեալ զօրս նոաւ ի
սկիւթացւոց՝ մարտեաւ ընդ նմա Թիգնաւիս իւր. և տի-
րեաց դարձեալ Համարկն իւրում ՚ի և բուլանդակ պոն
տոսի։ Այլ կաստոր նախարար նոր մեծ և այլ ևս իշ-
խանք զրգռեցին հուվմայեցւոց ապստամբեցան ի
նմանէ. որոց վասն և այլք Թողեալ գնան՝ յարեցան ի
հուվմայեցիսն. ըստ նոսին և հարազատ որդի նոր փառ-
նակէս գլուխ ամբարձեալ ապստամբեցոյց զնոսա զօրս
նոր, և յաղթեցոյց զնոսա ընդէմ նորին. և Թագաւորեաց ինքն
րեալ նոցա՝ զի ոչ ոք ընդէմ նորին. և սկսաւ մարտնչիլ ընդ առաջին՝ յո-
փոխանակ նորա։

3941: Իբրև յանդնարինս եմուտ միհրդատ՝ կոչեաց զտիկ-
5140: նայս իւր և զերկուսին դստերս, որոց անուանք էին միհրդատէ և նիւսսա. մին խոսեցեալ թագրին եգիպ-տոսի, և միւսն արքային կիւպրոսի: Այլ առեալ ի ձեռս զԹունալից բաժակն՝ իբրև կամեր ըմպել և արբուցա-նել, ազաչէին զնա դստերք նորա, զի նախ ինքեանք արբցեն և յետոյ նա. առին ապա ի ձեռաց նորա զբա-ժակն. արբին և մեռան. հարբ և ինքն, և յաւել խոցել զինքն սրով, զի մեռցի փութով. և իբրև ոչ մեռաւ սկսաւ վազվազել, զի թոյնն ժանտ ազդեսցէ ի նա: Տեսեալ ապա Թէ խուժանն հորդան տուեալ էր ի նեղքս՝ կոչեաց առ ինքն զզինուորս մի, և հրամայեաց նմա օգնել ձեռին իւրում. և նոր ձեռամբն ինքնին խո-ցեաւ զինքն կարեվէր՝ անդէն փչեաց զոգին, յետ կա-տ. Յիշխանութեանն ը ամ ամն ծգ. տես ի պատ. ք. 9:
(3939:) Ա.յլ յառաջքան զմահ միհրդատայ տիրան որդի տիգ-
(5138:) րանայ յանկուցեալ յինքն զոմանս ի նախարարացն հայոց՝ վտարանդեաց ի հօրէ իւրմէ. և անկաւ առ ար-քունի արքայ պարսից. և դրգռեալ զնա ընդէմ տիգրա-նայ՝ խաղաց նուաւա հանդերձ յՅն հայոց, և տիրեաց քանի մի քաղաքաց. և ապա եկեալ պաշարեաց զար-տաշատ քաղաք. և մարտ տուեալ զբաղում աւուրս՝ ոչ կարաց առնուլ զայն. յայնժամ թողեալ արշաւէ անդ զտիրան հանդերձ զօրօք՝ դարձաւ յՅն իւր:

Օ այն լուեալ տիգրանայ՝ որ յայնժամ ի հեռաւոր տե-ղիս էր՝ դիմեաց բարկութ ի վր որդւոյ իւրոյ, և հա-լածեաց զնա անտի. և տիրան անձարացեալ անկաւ առ Հռովմայեցիսն: Այս պոմպէոս՝ նր առաջնորդութ եմուտ ի հայս. և ապա հաշտութի խոսեցաւ ը տիգ-րանայ, և տիգրան դարձոյց առ Հռովմայեցիս զմանն Ձին ասորւոց և փիւնիկեցւոց յերիրատայ մինչև ի ծով, ևս և զմանն ինչ կապադովկիոյ և կիւլիկիոյ: Այս ի վերայ այսր նմին ետ պոմպէի բազում պարգևս. ը ո-րում և կապեցաւ ոգի նր. որոյ առաջի ցուցեալ զինքն առատասիրտ և վեհանձն՝ բաշխեաց իւրաքանչիւր զօ-րացն նր ը մարդամեծուի ձծ դահեկանս, և հարիւրա-պետացն՝ ե. և հազարապետացն ժե: Այս ինքն պոմ-պէոս առեալ ը իւր զերկուս որդիս միհրդատայ՝ ըզ-փոքրն միհրդատ և զաղշամ, դարձաւ ի Հռովմ. և կար-գեաց անդ եռապետական իշխանութի. իբր զի յուլիոս,

և կրասոս, և պոմպէոս լեցին Երուսաղէմ մա-
սանց Ցի, յր եբրայեցոյ, ասէրիկոյ, և ասիոյ:

Եւ ոչ տիգրան յետ խօսելոյ զՀաշտուբէ ընդ Հռովմայե- 3945:
ցիս՝ թագաւորեցոյց ի կենդանութեան իւրում զորդի 5144:
իւր զարտաւազդ ի վերայ արարատեան Ցի ի ընդ ամի
թագաւորութեան իւրոյ, զոլով ինքն ի միջագետս: Եւ
ի նոյն աւուրս առաքեցաւ գաբինոս սպարապետ
Հռովմայեցւոց ի վերակացութեան երկրին ասորւոց. ընդ
որում պատերազմ գրգռեալ տիգրանայ՝ էառ վերստին
ի ձեռաց Հռովմայեցւոց զբազում տեղիս՝ զորս դար-
ձուցեալ էր նոքա առ նմա: Եւ գաբինոսն զահի հարեալ
ի նմանէ՝ հաշտութեան խօսեցաւ ընդ նմա, ոտնձեալ նմա
զբեռորդիս նորա զիոքըն միհրդատ և զսրշամ. և
ինքն չոքաւ յեդիպտոս յօգնութեան պտղոմեայ արքայի
եգիպտացւոց:

Եկն ի նոյն աւուրս կրասոս վին յեռապետացն Հռով- 3949:
մայեցւոց, որում էր իշխել ասիոյ. և եմուտ յասորիս 5148:
իբր յանթոռ ասիոյ. և խաղացեալ անտի ի վերայ պար-
թևաց՝ խորտակեցաւ խնպատ և սպանաւ. տես ի պատ.
Ճ. 10. և 11: տես և վճ մնհոճան փառնակէսի որդ-
ւոյ միհրդատայ. ի գլ. 12: Եւ ապա վերակացու կար-
գեցաւ երկրին ասորւոց կասսիոս, և յետ նորա բիբու-
լոս. ընդ որոց պատերազմ տուեալ հայոց՝ վտանգեցին
զնոսա. այլ Հուսկ յետոյ տիրեցին Հռովմայեցիք բոլոր
երկրին ասորւոց. որոյ մի մասն էր Հայոց:

5: Դարձեալ ի այլ ևս գործ՝ որ գործեցան յաստարթ
փիգրանայ:

Ճ. 12:

Այսու ժամանակաւ տիգրան արքայ Հայոց՝ որ 3963:
Ծերացեալն էր՝ անկաւ ի հիւանդութիւն. որոյ 5162:
վճ և զօրավարքն և նախարարքն նորա՝ որք նուաւա զօրա-
նային՝ լքան յոյժ: Ոչեալ ապա տիգրանայ թէ առնուն
Հռովմայեցիքն և զայն մասն ասորւոց՝ որ էր ընդ իշխա-
նութիւն իւրով. և խորհին դիմել յարևելս՝ ի վրէժխնդ-
րութիւն Հարուճածոյն կրասոսի, անկաւ ի տարակու-
սանս, և կասկածեր թէ և ի վերայ իւր յարձակեսց-
ցին. ապա խորհեցաւ միաբանիլ ընդ արշեղի արքային
պարթևաց: Եւ քանզի ոչ էր Հնար այսմ լինել բայց եթէ

տալով նմա գնալ առ Տայր իւր արտա-
հան յափշտակեալ էր ի սրտից , զոր և խորհեր ար-
շեղ սկսաւ զարձուցանել , և սպասեր մահուն սիրտ բա-
նայ , նա ինքն սիրտ կամելն ետ նմա զայն . մա-
նաւանդ զի գիտեր Հաւատեաւք՝ Թէ սրտի իւր արտա-
հանդ ոչ կարեր պահել զնոյն : Յա՛ի Տառաստեան Թէ
այսր խոստացաւ սիրտ տալ զհաւատսն իւր ի հնազն

բանիւրայ որդւոյ արձակին :

Ի լինել այսր առաքելոյ արձակ առ սիրտ զոր բա-
զում՝ սրոց զօրաւոր կարգեալ էր զորդի իւր զաւետս ,
այն է պահապան , պատգամ յղեալ առ նա՝ զի բան իւ-
րում՝ Տանձարոյ արասցէ ըստ Տոմսիմեցեան՝ ոչ և գի-
տէ : Լուեալ սիրտ առ ինքն գնահատական ուշուա-
նեալ՝ որ կոչիւր բարեպահն՝ այլ սՀարկու և անՏնա-
զին պատերազմող . և ետ ի ձեռս նմ՝ զօր զօրս Տայոց .
և կացոյց զնա ընդՏանուր սպարապետ՝ ոչ սկսեալ ի վե-
րայ երեսաց , այլև ի վերայ զօրացն սրտից՝ զանունն
և զԹԻ սպարապետութեան տուեալ ի բարերս ի պատիճ
երեսաց նոր . և արձակեաց զնա ընդ դէմ Տոմսիմեցւոց :
3964: Եւ բարեպահն ի վերին մեծագեաց , և դիմել Յոր-
5163: ձանիեցւոյ ի վիմնիկ , և նուաճեաց զսորին : Ի՛նդ
ընդ առաջ եղ նմա անսոնկնոս . բայց երկուցեալ Յոհա-
նէսաբ . զի չուներ բանական պատրաստութեան . և ապա
գնաց ի Տոմս : Ի նոյն աւուրս եկն առ բարեպահն
և առ քահանայ սրբայրուկն սորոյ բարեհաճին
իւրոյ խոստացաւ նոր Տարար քանքար և հինգՏարիւր
կին զՀեղեցիկ , եԹէ լնկեցեալ գՏիերկնոս զԹագա-
ւորն և զքահանայապետ երկրի Տաստատեցեն զինքն
յիշեսցուԹեան անդ , և գՏերծուկն որդի անճնացաւ .

բոսի սպանեն Տանդերձ իւրովքն :

Ընդ այս Տաճախ բարեպահնայ մանաւանդ Թէ ու-
քահանայ զաջանեաց զզօրսն . և առաքեաց զՀաւատս
եր ծովեզերեայս ի Տրէաստան . և ինքն խաղաց ի մի-
ջերկրեայս . և վանեաց անտի զՏոմսիմեցիս , դիմել
մինչև յելիսեան . և ապա դարձ արար անտի յաստիճ
դալ ի Տրէաստան : Յա՛ մինչև Տաճախ էր նորա պա-
շարեաց քաղաքն գԲաղաքն երկիր նոր սահմանոս ետ նմա :
Յոկ Տերակլ և երեց եղբարքն նր փոսայեղոս օգնա-
կան լեալ Տիերկնոս՝ զդէմ ունելն նմ . որոյ և զօրա-

Եւայր մատան յերկուց կողմանց մինչև ի պենտեկոստէ։
Ա. պա լսէհաւ հիւրկանոս և փաստայեղոսի՝ եթէ բար-
զափրան ունի անցանել ընդ հրեաստան՝ առաքեցին առ
նա հրեշտակս խօսել ընդ նմա խաղաղութիւն։ Եւ նը առ
երեսս պատուհոյ ընկալեաւ զհրեշտակսն՝ առաքեաց ի
վեր ի նիզի զգունդ հեծելազօրաց. որոց առաջնորդ էր
գնել տակառապետ տիգրանայ յաղգէն գնունեաց,
իբր թէ ի պատճառս խաղաղութիւն խօսելոյ ի մէջ
հիւրկանեանց և անտիգոնեանց. բայց ի ծածուկ օգ-
նական լինել անտիգոնեայ։
Ա. յլ հիւրկանոսի զարհուրեաւ ի հեծելոց անտի՝ ոչ
կամեցաւ հանդերձ ամ բազմութիւնն ընդունել զգնել ի
ներքս. բայց զանգիտեաւ և ի բնդունելոյ՝ թոյլ ետ
նմա հինգ հարիւր արամբք միայն մտանել։ Եւ գնե-
ալ կամեցեալ դաւել զհիւրկանոս և զփաստայեղոս՝
խրատ ետ նը՝ զի գնասցեն առ բարզափրան. և ինքն
խոստանայր լինել բարեխօս վասն նը։
Յայնժամ հիւրկանոս և փաստայեղոս վերստին առաքե-
ցին հրեշտակս առ բարզափրան, և խնդրեցին ի նմանէ
նէ զերդումն՝ զի անվհատաճ լիցին. և բարզափրան եր-
գումն նը յարեգակն և ի լուսին և յամ պաշտամունս
պարթևաց և յարևն տիգրանայ և արշեղի։ Ապ. որ
վստահացեալ հիւրկանոս և փաստայեղոս՝ յօժարեցան
գնալ։ Խրատ ետ նը հերովդէս չերկնալ. զի կասկա-
ծեր յոյժ զնենգութիւնէ գնելոյ և բարզափրանայ. բայց
ապահովել նը վասն երդմանն՝ յանձնեցին հերովդէ
զեղբայր, և ինքեանք եկին առ բարզափրան ի ծովեզրն՝
ի գիւղն էքմոսան։
Տեսեալ զնը բարզափրանայ՝ ի վերուն երեսս եցոյց մե-
ծարանս առ նը. և ինքն մեկնեալ անտի՝ հրամայեաց
ճնացեալ զօրացն ըմբռնել զնը, և հատել ձեռաք մատ-
նել ի ձեռս անտիգոնեայ։ Եւ երբև ետես անտիգո-
նոս զհիւրկանոս՝ անկաւ զնովաւ, և առատմամբ եհատ
զունկն նը. զի եթէ յետոյ արձակեսցի, անընդունակ
լիցի քահանայապետուե. որովհետև պարտ էր քահա-
նայապետին անարատ լինել ըստ օրինացն։ Այս տես-
եալ փաստայեղոսի եղբօր հերովդէ՝ զարհուրեցաւ. և զի
կասկեալ էր ձեռաք՝ չկարացեալ առնել ինչ իւրմէ ե-
հար զգլուխ իւր զքարի, և վերաւորեաց զարտաքոյ։
Յայնժ ամ առաքեաց առ նա անտիգոնոս զգժիկն ոմն.

որ ըստ խրատուն նը եղ զԹուխնասեռ գեղ՚ի վէր վերաց նը ։
և սպան զնա ։

Լսեալ բարզաւերան պատուիրն յղեաւ առ գնել յեղեմ յոր-
դոյեաց զնա՝ զի որսասցի զՏերովդէս . և գնել թե-
պետ դաւով ինն պատրել զանապայ զնա՝ ելանել ար-
տաքս քան զպատրիսան , այլ Տերովդէս իմացեալ զնո-
րանկուածն նը ՚ի ձեռն Թզթոյ՝ զոր այլք գրեցին
առ նա՛ւ կալանաւորեաւ լինել յայ եղբօր իւրոյ՝ ոչ ետ-
բնաւ յանձն . բայց եւկուցեալ ևս ՚ի նենդուածէ գնե-
ցայ և անտիպանեանցն՝ ոչ իշխեաց կալ՚ի քաղաքն անդ ։
Այլ առեալ զընտանիս իւր՝ ծածուկ ՚ի գիշերի վա-
խեաւ առ Եղիմաս եգիս յամուրն մասադան . և անդ
Թողեաւ զընտանիսն՝ գնաց ՚ի պետրա քաղաք . և վու-
բայր ժողովէ երեք հազար քանքար և տալ բարզաւ-
բանայ՝ զի վերծուսցէ զեղբայր իւր . բայց յորժամ
լուաւ զմահ նորին՝ եկեաց գնաց ՚ի հռոմ ։

Յայր ջրբ հայոց և պարսից ձեռնատուճութ անտիպա-
նեանց մերն յեղեմ . և զինչն հիւրկանու և հիւրկա-
նեանց մերն յաւարի առին . և լցան բազում աւտրաւ . և
կայսեցեալ զանտիպանոս Թագաւոր հրեից՝ եկին ՚ի քա-
զաքն . և զամ երկիրն վեր ՚ի վայր դարձուցեալ խոռ-
վեցուցին . և ի բազում գաւառս ասպատակեալ աւե-
րեցին . և գքաղաքն մարիսաս գերի առեալ քանդեցին ։
Ասոլեալ ապա բարզաւերանայ զբազում ՚ի զօրայ յերկ-
րին ասորւոց և ՚ի սահմանս կիլիկիոյ , և զբակուր ՚ի
միջագետս հեծեալ զաջօրօք հայոց և պարսից , ընդ որս և
զգնել դարձաւ ինքն ՚ի հայս . և զհիւրկանոս տարեալ
մատոյց առաջի տիգրանայ հանդերձ ամ գերեօքն ։ Ա՛ր-
տիգրան հրամայեաց՝ զի զհրեայն գերեալս ՚ի մարիա-
սա քաղաք՝ բնակեցուսցէ ՚ի շամիրամակերտ ։

Լուեալ հռոմայեցւոց զայս ամ՝ Թագաւորեցուցին
զՏերովդէս ՚ի վէր հրեից , և առաքեցին զնա ՚ի հրեաս-
տան , օգնական տուեալ նմա զբենդեդիոս սպարա-
պետ հռոմայեցւոց զօրօք բազմօք , պատերազմիլ ընդ
զօրս հայոց և պարսից և զանտիպանեանս ։ Ասեալ
նոյ յաւուրս՝ փախստական արարին զինացեալ զօրսն
դրոս կացուցեալ ներ անդ բարզաւերանայ . և Թողեալ
զսկզբն մերձ յեփրատ հանդերձ զօրօք՝ ինքեանք դար-
ձան ՚ի վէր եղեմի , և պաշարեալ զայն պատերազմեցան .

և չկարացին առնել ինչ ։

Լսեալ

Լսեկ հայք և պարսիկք միաբանագամ միացեալք համա-
գունդ հոդան եւսուն և հասին ՚ի վէր սկզբնի , և կո-
ւորեցին զքօրս նր . և հեղմամբ արեան ողողեալ զեր-
կիրն՝ փախստական արարին զնա ՚ի հրնաստան առ
բենդեդէոս : Ա՛ւ ապա ՚ի յարձակիլ բակուրայ և դնե-
լայ ՚ի վէր բենդեդէոսի՝ զահի հարաւ բենդեդէոս . և
յարդարեալ կարգեաց մեծաւ պատրաստութիբ զքօրս
իւր , և պատերազմեցաւ ընդ նմա . յորում մարտի անկաւ
նա ինքն բակուր , ընդ նմին և բազումք ՚ի հեծելազօ-
բացն գնդելայ և ՚ի հետեւակացն պարսից ոչ սակաւ :
Ա՛նոյն աւուրս տիգրան արքայ հայոց հասեալ ՚ի վախ 3965 :
ձան կենաց իւրոց՝ մեռաւ ՚ի հասակի վաթսունն հինգ 5164 :
ամաց . կեցեալ ՚ի թագաւորութենէ ընդամէն իրը ծգ-
ամաց . կեցեալ ՚ի թագաւորութենէ ընդամէն իրը ծգ-
՚ի մահուանէ անտի հօր իւրոյ արտաշէսի . (տես ՚ի
պատմ . ը . ՚ի ծանօթ . ի . (2) :

9 : Վաղարշակ արքայ աղջկան և արշամայ :

ը . 12 = 15 :

Ընդաւազդ առաջնին՝ որդի տիգրանայ երկրի , որ 3965 :
կարգեալ էր ՚ի նմանէ թագաւոր արարատեան 5164 :
գաւառի՝ ՚ի մեռանիլ հօր իւրոյ թագաւորեաց ՚ի վե-
րայ ամ հայոց , և նստաւ յաթոռ անդ , և ոչ եկն ՚ի միջա-
գետս , ուր էր աթոռ թագաւորութեանն ՚ի մծբին : Ա՛ա
՚ի թագաւորել իւրում բնակեցոյց զերդարս և զքօրս
իւր ՚ի գաւառին աղիովիտ և առբերանի . և ետ նոցա
գՀասս այնոցիկ գաւառաց . և կարգեաց իւրաքանչիւր
նց մուտս և ռոճիկս՝ հանդոյն այլոց արշակունեաց ,
որք էին ՚ի կողմանս հաշտենից :
Ա՛յլ արտաւազդ յետ ՚ի կարգի դնելոյ զայօսիկ եղ
ջինքն յանկարգ բերմունս . որով և տաղտկալի եղև
քաղմաց ՚ի զօրաց իւրոց . և ՚ի լքանիլ նց՝ թիշնամիք նո-
ցա առին զբազում տեղիս ՚ի մոնտ միջագետաց . որոց
վն սկսան արտնջել հայք : Ա՛պա զգաստացեալ և զօ-
րացեալ արտաւազդայ ժողովեաց վարձուք զօր բազում
յաստրպատականէ , և ՚ի քնաստոց կովկաս լերինն , և
յաղէանից և ՚ի վրաց . և իջեալ ՚ի միջագետս՝ եաւ
զամենայն տեղիս՝ զորս յաւիշտակեցին թիշնամիք :
Ա՛ինչև մեկնեալ էր արտաւազդայ ՚ի միջագետաց՝ 3968 :
զիմեաց յարևելս անտ[illegible]նոս մեծ՝ որ իշխանակիցն էր 5167 :

օգուտս կայսեր, ի մահ եղեալ յարձակիլ ի վերայ պարսից: Իբրև արտաւազդ երկուցեալ յարշաւանաց նոցա՝ հրեշտակս առաքեաց առ նոս. և հաստատեաց ընդ նմա հաշտութիւն խաղաղութեան. խոստացեալ նմա՝ ոչ եթէ կամիլ ընդ հռոմայեցւոց յամի: Իբրև սակաւ անտոհանելոց խաղալ զօրաց ի պատս՝ օգնական ինդրեաց յարտաւազդայ. և նա խոստացաւ. և ապա ձեռնտուն լեալ նմա. երեսս՝ ի ծածուկ օգնեաց պարսից. որոյ վրէ և խորտակեցան զօրք անտանելոյն և յանհարկոս վտանգս դիպան, մինչև հազիւ փախստեամբ անկանիլ նմա ի երկիրս արտաւազդայ ի հայս. և կացեալ անդ զձմերան պրն՝ զարձան յաստիս. և Թէպետ իրաւունք եղեալ անտանելոյն ձեռնտուութեանն արտաւազդայ, բայց ինքնա ցեալ յայնժամ առնել ինչ չտքաւ յերկիւղէ առ հզօր պատրաս Թագուհին, և երկիցեր վրէժ առնուլ յարտաւազդայ. (աեւ ի պատ. ը. ւ. ւ:)

3970: Իբրև լուաւ դէպ եղեալ արտաւազդայ գալ ի մէջերիս առա-
5169: քեաց առ նա անտանելոյն հրեշտակս բանիւք բարեկամուեան, և կոչեաց զնա նենգաւոր յերկիւղ պատա ։ Իբրև յոչ առնուլ յանձն արտաւազդայ՝ խնդրեաց անտանելոյն զգուաստ նմ՝ ի հնուէ որդւոյ նորոյ, զի զաւականեսցէ զնա. բայց չանսաց նմա արտաւազդ ։ Ապա ի սկիզբն ամարան եկեալ անտանելոյն ի փոքրն Հայս՝ հարեալ բեաց անդր զարտաւազդ՝ իբր Թէ խորհուրդ խորհելոց ընդ նմ ։ Իբրև ասկայն կասկածեալ ի նմանէ արտաւազդ՝ գալ ի ներքին Հայս։

Ապազաս ապա անտանելոյն ի մեծն Հայաստան՝ Համբարձեալ Հրաւակելով Թէ ունի գնալ ի վէր պարսից. և միւսանգամ առաքեաց դեսպան առ արտաւազդ գալ ի տեսել իւր. այլ նա պատճառանօք ինն խոյս ետ յարտաշատ քաղաք։ Յառաջ անցեալ անտանելոյն՝ գնաց գրծեր Հաստատելոյ զարտաւազդ գալ ի բանակ իւր, փոքր ի Համոզելոյ ի ձեռն բարեկամաց, և փոքր ի աշաքեի առնելոյ բաղմութիւն զօրաց. և մեծամեծս ևս խոստանայր գրովք. մինչև վատահ եղեալ արտաւազդայ գնաց ի բանակ նորա. և նա անդրէն փաղաքանիւ ձերբակալ արար զնա ի հինգերորդ ամի առանձինն Թագաւորութեան նր. և էարկ զնա յոտիկ շղթայս. կալաւ և զօրիս նր, և շղթայիւք կապեաց զնա. և իջեալ նոքօք յաղեքսանդրիա էտ զնա կէսարացոյց Թագուհ-

ջոյն ՚ի պարզեւս ։ Եւ ՚ի սահմանէն գնաց երկիրպագա-
նել Թագուհւոյն՝ որ նստեալ էր ՚ի գահոյս , անհնարին
եղեւ նմա առնել զայդ ։ Եւ որ Թէոփեւոս զարմացան ծա-
ռայքն նր , բայց սկսան խոսիւ վարել Եւ նա իբր Եւ ամ-
բարտաւանս ։

Կոչեալ ասպա անտոնինոսի վերստին ՚ի հայս՝ Թագա-
ւորեցոյց զորդի իւր զաղէքսանդր ՚ի վր ստորին հայոց՝
յերեսաց դէտոյ մինչև ՚ի միջագետս ։ Եւ զվերին հայս
յայնկոյս երասխայ յանձն արար արքային մարաց ։ զո-
րոյ զդուստրն զյովսեփոսէ էած ՚ի կնութ որդւոյ իւրոյ
աղէքսանդրի ։ Իսկ զիւրքն հայս հաւատաց արքային
պոնտոսի ։

Եւ յետ տարւոյ մերոյ ԽՋԸ յերեսունս Թագ եդ ՚ի գլուխ
իւր ։ Եւ դրամ հատեալ՝ եւս քանդակել ՚ի նմ ։ * անտո-
նինոս յաղթող հայաստանի ։ Եւ ՚ի թէնեսմանալ ընդ-
դէմ նր օգոստոս կայսեր՝ ծագեցաւ պատերազմ մեծ
յոյժ ՚ի մէջ նց, զորպիսի երբեք չէր տեսեալ ՅՈՒ։ Իսկ
յետոյ ՚ի պարտութիւն մատանել անտոնինոսի վախեաւ
խոյտառափաբար յերկիրսն ։ Եւ կղեոպատրա ՚ի դաւ-
նութէ սրտին իւրոյ եհատ զգլուխ արքային սրտա-
ւաղեայ , և զայլոց ոմանց եւս ։ Եւ ինքն իջեալ ՚ի
դամբարանս՝ եդ իժ ՚ի վերոյ բաղկաց իւրոց ։ և ՚ի
խոյթիւճածոյ նր Թունաւորեալ ատտակեցաւ ։ նոյն-
պէս և անտոնինոս խոցեալ զկողս իւր՝ բարձաւ ՚ի մի-
ջոյ ։

Զբշամ եղբայր տիգրանայ յրմիւռնիլ արտաւազդայ՝ 397 ։
Թագաւորեաց ՚ի վր հայոց ՚ի հատակի իբր Ե ամաց ։ 5169 ։
այլ վանեալ ՚ի հռովմայեցւոց՝ փախեաւ և անկաւ ՚ի
պարսիկս ։ և հայր անդ վարանեալ ՚ի միտս ։

Իբրև լուր եհան ՚ի պարսս Թէ մեռաւ անտոնինոս, ար- 3973 ։
քայն պարսից աշխատիր , և արքայն հայոց արշամ զօրա- 5172 ։
ժողով լեալ դիմեցին ՚ի վերին հայս ։ և ՚ի բաց վանե-
ցին անտի զմարս ։ Խաղաց անտի արշամ ՚ի ստորին
հայս ։ և յարձակեցաւ ՚ի վր հռովմայեցւոց՝ զորս Թո-
ղեալ էր անտոնինոս ։ և սրախողխող ալար զնոսին ։ և
ինքն տիրեաց բովանդակ ստորին հայաստանաւ , եւս և
փոքուն հայոց մինչև ՚ի կողմանս կեսարիոյ , ձեռնտու
ունելով իւր զպարսիկս ։ Եւ արշաւիր արքայ պարսից
զոր յինքն զրաւեաց զվերին հայս՝ կարգեաց անդ զաշ-
տաշիսա անուն ոմն իբր փոխարքայ ։ և յայնմհետէ այն

ե վերին հայոց մնաց ՚ի ձեռս օտարաց մինչև ՚ի ժամս
երուանդայ ։

Իբրև գիտաց արշամ արքայ հայոց՝ թէ Թիբերեաց օգնա-
ական կայսր , հրեշտակ առաքեաց առ նա , և խնդրեաց
զորդիս եղբօրորդւոյ իւրոյ արտաւազդայ. բայց լուծել
օգոստեայ զոր ասար արշամ ընծայեցին՝ ոչ ալձա-
կեաց գնոյ ։ Ա երասին յղեաց առ նա արշամ հրեշտակս՝
դնել ՚ի միջի ուխտ խաղաղութե . և խոստացաւ տալ
հռոմայեցւոց ամ յամէ հարկս ՚ի ձեռն հերովդէ ՚ի
կողմանցն միջագետաց և ասորւոյ ։ Յանձն էառ
օգոստոս կայսր զպայմանս հաշտութեն , և հաստատեաց
զայն ։ Ա կեալ ապա արշամ ՚ի միջագետս՝ բնակեցաւ
՚ի մծբին ։

3984 ։ Վեպ եղև յետ քանի ամանց գալ օգոստոսի միւս-
5183 ։ անգամ յասորիս . և զայն իբրև լուան նախարարք վե-
րին հայոց՝ առաքեցին առ նա հրեշտակս. և բողոք բար-
ձեալ զբռնութէ պարսից՝ խնդրեին տալ ինքեանց Թիգր
զսիպրան փոքր՝ զորդի արտաւազդայ, որ էր ՚ի հռոմ.
և խոստանային կալ հպատակ հռոմայեցւոց ։ Ա՛ւ օ-
գոստոս ըստ խնդրոյ նոցա Թիգրեցոյց ՚ի վերին հայս զ-
սիպրան փոքր ։ Ա՛ւ զայս ոչ կարաց խափանել արքայն
պարսից , զի պատաղեաւ էր յայլ իրս ծանուցա . և եր-
կիցեր և սա յօգոստոս կայսերէ . ըստ որում նոր ուխտ էր
եդեալ հաշտութե ։ Այնմհետ և արշամ առաւել հաձեցաւ
ըստ Թագաւորել անդ Թոռինն եղբօր իւրոյ մեծին տիգ-
բանայ քան օտար ազգաց ։ Ա՛ւ ինքն արշամ կացեալ ՚ի
Թագաւորութե ըստ ամանն իւր . մեռաւ ՚ի խոր ծերու-
Թե , Թողեալ զորդի իւր զաբգար ժառանգ իւրումն
ընշխանութեան ։

7 ։ Ա՛ամանակ աբգարու ։

ը . 16 = 18 ։

Ի բգար որդի արշամայ Թագաւորեաց ՚ի մծբին ՚ի
3999 ։ 5198 ։ վէր հայոց յամի ծի 3999 . կիս 5198 ։ Սա էր այր
Թիւինաւէտ և բարձրահասակ, հեզահամբոյր և քաղց-
բաբարոյ , խմաստուն և հանճարեղ. ը զամն որք առ
իւրովք ժամովքն էին . զորմէ և պատմիչք յունաց և լա-

կոչեցաւ նա՛ի հայոց աւազ այր. այր երևելի և արդեա
ք զնա մարդ. այլ աստիւք և յոյնք ոչ կարելով ուղիղ
արտասանել զանուանակոչութիւնս աւազ այր՝ կիսաբ աւա
զար կոչելն, և կիսաբ սպակար. մինչև հասարակ անո
ւամբ կոչիլ նմա աբգար. իսկ աստիւք սովորեցան
անուանել ագգար՝ որ նշանակի աւազ, կամ մեծ. և
զի զայս անուն ևեթ տալին նմա, բուն անուն նր ոչ յի
շատակեցաւ։ Եւ դու մի՛ ինչ զարմանար ի այսպիսի
փոխհատուն անուանակոչութե. զի այս յայլ բազմ ան
ուանս և ևս լինի՛ի բերանս ռամկաց. որ փիսկ ասէլոյ ած
աուար՝ ասի աստուր. փիսկ ասէլոյ մսիթար՝ ասի մսիկ.
փիսկ ասէլոյ մարտիրոս՝ ասի մրտօ. փիսկ ասէլոյ կարա
պետ՝ ասի կրպօ. ևայլ. և ևս և փիսկ ասէլոյ վաղարշակերտ՝
ասի ալշիկերտ. փիսկ ասէլոյ արկուռի՝ ասի ակուռ. փիսկ
ասէլոյ մանաւազակերտ՝ ասի մանազկերտ. ևայլ. սոյն
պէս և յանուանդ աւազայրն, որոյ փոխանն ասացաւ
աբգար։

4000 Երկրորդ ամի թագաւորութե աբգարու ել հրաման
5199 յօգոստոս կայսերէ Ծագիր առնել զամ տեղիս՝ յորս
ձգիւր լինիանուն նր. և պատկեր նորին կանգնեցաւ
՛ի մեհեանս աղգաց։ Եւ՛ի նմին ամի անեղականն պատ
կերն հօր յաւիտենականին զգեցեալ զպատկեր հոլե
ղինն՝ ծնաւ՛ի սրբոյ կուսէն. և՛ի թուրեղ մարդկան
զմարդին՝ եկն նա փրկել զմարդիկ։

4001 Ամենայն յայնժ ամ և հերովդէ իբր ետր հանդիսանալ
5200 առաքեաց և զիւր պատկեր՛ի մեհեանս այլոց աղգաց,
կանգնել զայն առ պատկերն կայսերն. յղեաց զնոյն
և՛ի հայս. բայց աբգար ոչ ընկալաւ. որոյ աղաչաւ
զայրացեալ յոյժ հերովդէ՝ խնդրեր առնուլ վրէժ՛ի
նմանէ. Եւ՛ի յառնել իրիք առթի՝ առաքեաց հերով
դէս բազմութիւ զօրաց զերեզմօրդին իւր զյուսէփ՛ի վէր
աբգարու. և յուսէփայ մարտուցեալ ընդ զօրս նր՝ ասա
նաւ. և զօրք իւր ցրուեցան և փախեան. և հերովդէս
ևս ամօթահարեցաւ։

4004 Ինդն աւուրս՛ի գրգռել թշնամեաց զօգոստոս կայսր
5203 ընդդէմ աբգարու՝ սկսաւ ընդ ակամբ հայիլ՛ի նա
կայսրն։ Եւ յամ իրազեկ լեալ աբգարու՝ դնաց՛ի հռոմ
4 նորոգել և հաստատել զիւրն միաբանութիւնն ընդ օգոս
տոս։ Եւ իբրև յանդիման եղև նա կայսեր, և բե
րան՛ի բերան խօսեցաւ ընդ նմա, աքանչացաւ կայսրն ընդ
տես

Ա. Թագ. ԻԴ. 52 տեսիլ աբդարու և ըստ զարմանալի իմաստութիւն նը, և կապեցաւ սիրով ոգի նը ըստ նմա. և այնուհետև առաւ ելքան զնա ցանկալի եր նմա կենակից ըստ աբդարու ընտանութեան և ուտել ըստ նմ. և ոչ ներեր նմա մեկնիլ յիւրմէ և ոչ օր մի առ՝ի վայելելոյ՝ի բարեկամութեան նը։ Այս Թեպետ խնդրեաց աբդար բազմ անգամ արձակել զինքն յԱ իւր, այլ ոչ Թոյլ ետ նմա կայսրն զամենայն երիս. բայց յետոյ յաղթեաւ՝ի հարկեցուցիչ բանից նը՝ ակամայ կամօք Թողացոյց նմ։ Այս աբդար հասեալ յԱ իւր՝ի մծբին՝ արար բազմ շինուածս և երևելի գործս. կանգնեաց և ձեռակերտ մի՝ի միջադետս, զոր անուանեցաւ աբդարշատ։

14։ Այլ՝ի մեռանիլ օգոստոսէայ կայսեր և՝ի թագաւորել տիբերեայ՝ արհամարհութեն կրեալ աբդարու՝ի նմանէ, խորհեցաւ ապստամբել՝ի հռովմայեցւոց, Թիկունս ունելով իւր զպարսիկս. և յայս սակս ձեռնարկեալ յերեսիա քաղաք՝ նորոգ շինեաց և ամրացոյց զսոյն ըստ ամ վայելչութե. և փոխեաց անդր զարքունիս իւր զամ։ Այս տեսեալ Թէ քեռորդի իւր սանսատրուկ մանուկ հզօր է և իմաստուն, կարդեաց զնա իշխանաց իշխան և հրամանատար ՅԱին հայոց. և ցուցեալ նմ զխորհուրդ վտարանդութե իւրոյ՝ առաքեաց զնա՝ի ներքս՝ի սահմանս արտազու. զի անդ նստեալ պատրաստեսցէ զզօրս կարգ զօրաց՝ի պատերազմ։

Ա՝եռեալ եր ըստ այն աւուրս արքայն պարսից արշաւիր, Թողեալ զերիս որդիս. զարտաշէս, զկարէն, և զսուրէն. և դդուստր մի կոչմ անուն. և կայր՝ի մէջ նոցա խռովութիւն մեծ. զի՝ի կամիլ արտաշէսի Թէրեալ՝ եղբարք նր ըստիմանայինն նմա։ Այս յառաջելոյ խռովութենն՝ տեսեալ աբդարու Թէ չկարէ օգնուն գտանել՝ի նոցանէ՝ եԹող զխորհուրդ իւր. և ժողովեալ զզօրս ջրքաւ՝ի պարսս. և հաստատեաց զարտաշէս՝ի Թագաւորութե։ Այս յիշեցեալ դառնալ եղբարցն՝ համոզել զնա՝ի խաղաղուն՝ կարգեաց՝ի մէջ նոյ զայսպիսի խնդիր սահման, Թէ զի արտաշէս Թէրեսցէ որդւոց յորդիս. իսկ եղբարք նր՝ արք կոչեին պահլաւք յանուն քաղաքին և Ձին իւրեանց պահլայ, լեցին պատուհականագունն և առաջինն ք զնա նախարարութե պարսից ըստ զարմք Թէրի. և եԹե դեպ լինի սպառիլ զարմին արտաշէսի՝ յորդւոց նոցա նստցին Թէրը պարսից։ Այս յայս

յայսմանէ որոշեցան երեք երևելի ցեղք պահլաւու-
նեաց. այ են կարենի պահլաւք, սուրենի պահլաւք,
և ասպահապետի պահլաւք յանուանէ իշխանաւոր առն
հոյմեայ։

23։ Այեւ սահմանելոյ աբգարու զայսպիսի կարգս հիմանդ
դացաւ անդ յՅեին պարսից, և անկաւ յախտ ուրկուե-
ւէոյ և վուլծացել դարձաւ յՅ իւր յերեսիա քիլք։ Այն
եղև յամբաստանիլ նմ առ տիբեր կայսր՝ թէ վա՜ա-
պստամբուե գնացեալ էր ի պարս՝ անբաւիր արար
զանձն ամէնից։ Այն ի վերստին ամբաստանիլ նմ չա-
րախօսուԹիւ հերովդէի անԹիպատասխ՝ առաքեաց աբ-
գար զերկուս հրեշտակս, ըստ որս և զանանէ սուրհանդ
դակ զիւր հաւատարիմ յՅն պաղեստինոյ առ մաուի-
նոս իշխան հռովմայեցւոց, և ծանոյց նմա զանիրաւուԹիւն
իւր, զի և նա յայտնեսցէ կայսեր, և լիցի միջնորդ
խաղաղուԹե։

29։ Այ ձարեալ հրեշտակացն աբգարու զգործն ի պաղես-
տին՝ ի դառնալ իւրեանց լուան ի բազմաց բազում
ինչ զօքանչելագործ բժշկուԹեանց քոյ. և ցանկացան
ելանել յերկիր առ ի տեսանելոյ զնա։ Այն իւրև եկին
և տեսին աչօք զօքանչելիսն զորս առնէր վերկիցն Յն՝
մանաւանդ ի վերայ ախտացելոց՝ զարմացան յոյժ. և
դնացեալ պատմեցին Թէրևին իւրեանց աբգարու։

Այ ունէր աբգարու զայս՝ հաստատեաց ի միտս իւր՝ Թէ
նա իցէ Աչմարիտ որդի Նոյ. և առաքեաց առ նա հրեշ-
տակս ընդ անանէի հանդերձ ԹղԹով. յորում յետ դա-
ւանելոյ զնա ած կամ որդի Նոյ՝ խնդրէր բժշկուԹիւն հի-
ւանդուԹե իւրոյ. և հրաւիրելով զնա առեր. * լուծ՝
զի հրեայք սրտնջեն զքէն, և կամին չարչարել զքեզ.
բայց քաղաք մի փոքրիկ և դեղեցիկ է իմ. և բաւական
է ինձ երկոցունցս։ Պատուէր ևս ետ մատուցանել
ինք իւր զոհս Նոյ ի տաճարն Նր Յեմ. եդեալ ընդ նո
և զպատակերահանն ին, զի եԹէ ոչ երեսցի վերկիցն՝ հան-
ցի զպատակեր Նր։

30։ Այնացեալ հրեշտակացն ի հրեաստան, և հասեալ մօտ
Յերուսաղէմ մտանելոյ նոն անդր՝ կամէին մատուցա-
նել նմա զԹուղԹն աբգարու. բայց ոչ համարձակեցան
անձամբ անձին առ նա մերձենալ, մտեան առ փիլիպ-
պոս, և ասեն, կամիմք զյն տեսանել, Նր Թէ կամիցէ
խօսել ընդ նմա. և փիլիպպոս խօսեցեալ ընդ անդրէն՝ եր-
կո-

հոգին՝ ի միասին ծանուցին յոքն : Այլոցդ յայնժամ յօ-
րամբասել յանձն իւր . և հրամայեաց Թովմային առա-
քելոյ դրել առ աբգար պինդ Թղթոյ նր . և նա գրեաց
ընդդէմ՝ ի բերանոյն քրիստոս . յորում խոստանայր քն՝ Թէ
յորժամ համբարձայցի՝ առաքեցից առ քեզ զմի յաշա-
կերտաց իմոց , և նա * զցաւս քո բժշկեսցէ , և կեանս
քեզ և որոց իբր քեզ են շնորհեսցէ ։

Այս անդէն յաշխատ լինել պատկերհանին՝ ի նկարել
զանխտիր զդէմս քրիստոսի, և յոչ կարել , առեալ յոմի դաս-
տառակ մի՝ եդ՝ ի վրայ ածայնն դիմացն , և սքանչելապէս
տպաւորեաց՝ ի նմին զՀրաշալի կենդանագիրն կերպա-
րանաց իւրոց . և տուեալ զայն ցանանէ և ցայլ հրեշ-
տակն՝ առաց տանել առ աբգար հանդերձ Թղթովն՝ ի
սիրհանս տեղեացանց և բարի հաւատոց նորին : Ա-
ւետ աբգարու զայսոսիկ պարգևս՝ երկիր եպագ ածց
այնի պատկերին , և քաջալերեցաւ . և այնուհետև
տպասէր կատարելոյ խոստմանն քրիստոսի . և հրամայեաց
պահել զԹուղթն և զպատկերն մեմ զգուշութիւ ։

30 ։ Այս յետ համբառնալոյ նորա՝ Թովմաս առաքել մինչ յեր-
կուտասանից ել յանձնելոյ նմա՝ երկիրն առաքեաց զԹա-
դէոս զմին յեօթանասնից յեղեսիա առ աբգար : Այս
Թադէոս եկեալ առ նա լուսաւորեաց զնա՝ ի հաւատս
և բժշկեաց զնա՝ ի բոլոտուԹենէ նր , և մկրտեաց զնա ,
նոյնպես և զամենայն տունն . շինեաց և ղեկեղեցի մեծ .
և ձեռնադրեաց նոյ՝ ի տեղի իւր եպիսկոպոս զմեռաքսագործ
զոմն՝ որ էր խոյրարար աբգարու , եղեալ նմա անուն
Ադդէ . զոր առնիք ագէ կոչեն : Այս երեալ գնաց՝ ի
ներքին հայս , ուր էր սանատրուկ՝ ի շահաշտան գա-
ւառ , այն է արտազ : Այս քարոզեաց քր հաւատոյ սա-
նատրուկ՝ ի քն , և մկրտեցաւ . ել նմին հաւատացին և
մկրտեցան և ժողովուրդք բազում և նախարարք ոչ սա-
կաւ , ևս և սանդուխտ դուստր սանատրկոյ . և անդ
ևս ձեռնադրեալ Թադէի եպիսկոպոս զղաքարիա ոմն՝ չորաս
յաղուծանս ։

31 ։ Ի լինել այսր այսպէս գրեաց աբգար Թուղթ առ տէ-
